# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2019/71, 03.10.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Վերիտաս» ՍՊԸ

**Պատվիրատու՝** ՀՀ առողջապահության նախարարություն

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» գնանշման հարցում

**Գնման առարկան՝** Բժշկական սարքավորումների ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** Արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ընթացակարգը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել վերը նկարագրված խախտումները:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ բերող անձին
Հասցե՝ ք. Երևան Մելիք Ադամյան 1
«Վերիտաս» ՍՊՀ տնօրեն Ա. Մխիթարյանից
Հասցե՝ Նորագյուղ 9փ, 3տ., հեռ. 099546900
e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու ՀՀ առողջապահության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն N 3

Գնանշման հարցման ընթացակարգի
ծածկագիր ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2
**Գնման առարկա՝ բժշկական սարքավորումներ**

# ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան

1.1 ՀՀ առողջապահության նախարարության կողմից 25.09.2019թ. հայտարարվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2 ընթացակարգը: Գնման առարկա՝ բժշկական սարքավորումներ:

1.2 Տեխնիկական բնութագրերը կազմված են սխալ, իրենց մեջ պարունակում են գոյություն չունեցող ապրանքներ, նշված չեն պահանջվող պարամետրերի չափման միավորները:

1.3 Հրավերի հայերեն և ռուսերեն տարբերակների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես հայերեն տարբերակի չորրորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է «Կանգնակի պտտման անկյունի տիրույթը՝ ոչ պակաս քան **30 °-ից մինչև +120 °**», մինչդեռ ռուսերեն տարբերակում այդ՝ ավելի լայն միջակայք է գրված և սկսվում է **մինուս** 30 °-ից և գրված է «***от - 30 ° до +120 °***»: Եվս մեկ օրինակ, հայերեն տարբերակում գրված է «Բնակարանային վահանակի դետեկտորի բնութագրիչը», իսկ ռուսերեն տարբերակում «Характеристики плоско-панельного детектора»:

1.4 Հրավերի յոթերորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է «Մանրէաբանական էֆեկտիվություն՝ ոչ պակաս քան 99.99 % պահանջը»: Արտադրող մի շարք ընկերություններից ստացված պատասխանների համաձայն, 99,99% արդյունավետությամբ ռեցիրկուլյատորներ չեն արտադրվում:

1.5 Հրավերի յոթերորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ''ճառագայթումը ոչ պակաս քան 24: Գրված չէ չափման միավորը:

1.6 Հրավերի 5-րդ էջի չորրորդ պարբերությունում գրված է, որ «Սույն գնման ընթացակարգը հայտարարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան»՝ մինչդեռ Armeps համակարգում հստակ նշված են ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները:

**2.** Բողոքի իրավական հիմքերը:

Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

**ա) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.**

**բ) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:**

**Հարկ է նշել, որ** Armeps համակարգում հատակ նշված են սույն ընթացակարգով ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները, **ուստի ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման իրավական հիմքերը բացակայում են:**

**Բացի այդ, ՀՀ 2019 թվականի ՀՀ Կառավարության 27 հունիսի 2019 թվականի N 783-Ն որոշման Հավելված №3-ի համաձայն, 31002 ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվել է 2,076,786.2 ՀՀ դրամ, հետևաբար ֆինանսական միջոցները առկա են, իսկ Գնումների մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառումը ոչ իրավաչափ:**

**Բողոքի պահանջը՝**

1. Արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2 ընթացակարգը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել վերը նկարագրված խախտումները:

Կից ներկայացվում է

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը
2. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
3. Պետական գրանցման վկայականի պատճենը

«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյան

03.10.2019թ.